# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Եվրոֆուրնիտուրա ՍՊԸ-ն ՀՀՏՄ-ՄԱՆԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Սոդոմոբ | Սոդոմոբ | Սոդոմոբ | Եվրոֆուրնիտուրա ՍՊԸ | Զգեստահարանը 5 դռնանի է, այն ամբողջությամբ, ներառյալ միջնապատերը պետք է պատրաստված լինի 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ E0դասից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) (կամ համարժեք) և նույն լամինացված ՓSU E0դասի գույնի: Աշխատանքային հարթության եզրերը պետք է լավ հղկված ու մշակված լինեն, առանց ծլեպների, առջևի կլորացված հատուկ դետալներ: Զգեստապահարանի արտաքին չափսերն են` 1708 x 300 x 1644 մմ (L x Խ x Բ), յուրաքանչյուր սեկցիայի ներսի չափսերն են` 320 x 300 x 1300 մմ (L x Խ x Բ) մմ: Բոլոր 5 բաժիններում էլ, ողջ լայնությամբ և խորությամբ պետք է նախատեսված լինի` վերևի մասում գլխարկի, իսկ ներքևում կոշիկների համար առանձնացված հետևյալ չափսերի` 320 x 300 x 200 մմ (L x Խ x Բ) տեղեր (բաց դարակներ): Բոլոր սեկցիաներում գլխարկների դարակի տակից պետք է ամրացված լինի մետաղական բարձրորակ երկտեղանի կախիչ: Դռներն ամրացված են և փակվում են 3-ական բարձրորակ ծխնիներով: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Այն պետք է ունենա չորս առանձին փայտյա, կամ մետաղական 300 մմ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բարձրությամբ ոտքեր, որոնք տեղադրվում են եզրերից 50 մմ դեպի ներս: Ոտքերի հատակին հպվող հատվածի եզրերի տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը` առնվազն 8 մմ է: Պետք է լինեն ամուր` պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է լինեն էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես` գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների և ծշեպների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն` մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Գույնը նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Եվրոֆուրնիտուրա ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՏՄ-ՄԱՆԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |
| | | | | | |